# ԹԵՄԱ 4 ԱՖՐԻԿԱ

## ԴԱՍ 4.2. Կլիման: Ջրագրությունը: Բնական զոնաները

• • •

*Սահարան (արաբերենից թարգմանած՝ սահրա-անապատ) աշխարհի խոշորագույն անապատն է(ավելի քան 7 մլն. քառ. կմ):*

*Թեև այն անապատ է անհիշելի ժամանակներից, բայց նրա պատմության մեջ եղել են ժամանակաշրջաններ, երբ ունեցել է համեմատաբար խոնավ կլիմա և ծածկված է եղել սավաննաներով, երբեմն էլ՝ անտառներով: Ժամանակին խտաբնակ լինելու վկայությունն են ամբողջ անապատի տարածքում հայտնաբերված աշխատանքային տարբեր գործիքները, որոնք մարդն օգտագործել է հին քարի դարում՝ պալեոլիթում (պալեոս-հին, լիթոս-քար):*

*Երկրի վրա քիչ տեղեր կան, որ անձրև ընդհանրապես չի թափվում:Այդպիսի վայրեր կան Սահարայի ներքին շրջաններում,որտեղ տարիներ, տասնամյակներ շարունակ անձրև չի գալիս, գալու դեպքում էլ որոշակի բարձրության վրա գոլորշանում է և գետնին չի հասնում: Սակայն այդպիսի վայրերում անսպասելիորեն կարող են թափվել տեղատարափ անձրևներ, երբ բոպեների ընթացքում ջրի մարդաբոյ շերտ է գոյանում:*

• • •

*Գետնից օդի շերտի ուժեղ տաքացման արդյունքում առաջանում է օդի շերտերի սահմանազատում, լույսի ճառագայթների բեկում, ինչն հանգեցնում է միրաժի (տեսիլք) առաջացման: Կեսօրվա կիզիչ ճառագայթների ազդեցությամբ հորիզոնի վրա երևում են ծածանվող լճեր, օազիսներ կամ լեռներ: Տեսիլքը առաջանում է արևածագից առաջ, երբ օդը փոշիով հագեցած է:*

*Արեգակն է կարգավորում կյանքը Սահարայում: Ցերեկը շոգ է, գիշերը՝ ցուրտ: Օդի ջերմաստիճանի օրական տատանումները մեծ են՝ ավելի քան $50^0$ : Ցերեկվա շոգը մարդն ավելի թեթև է տանում, քան գիշերվա ցուրտը:*